



# «ԶԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐԻ ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Մույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:*

## 1. Ընդհանուր տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի բազմամետաղային հանքավայրի մասին

Գլաձորի բազմամետաղային հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում, Եղեգնաձոր քաղաքից 12 կմ հյուսիս արևելք, Մալիշկա գյուղից 10 կմ դեպի հյուսիս, Մալիշկա և Կորեկի-ձոր գետերի վերին հոսանքներում, Թեքսար լեռան գագաթային մասում: Հանքավայրը զբաղեցնում է 8 կմ<sup>2</sup> տարածք: Գլաձորի հանքավայրի համակարգված երկրաբանահետախուզական աշխատանքները 1929 թվականից հետո վերսկսվել են 1950-1964թթ: Կատարված աշխատանքների հիման վրա տրվել է հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը: ԽՍՀՄ ՊՊՀ փորձաքննության արդյունքում հանքավայրի պաշարները վերագրվել են արտահաշվեկշռային: 2005թ., ելնելով ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակից և մետաղների գների համաշխարհային կոնյուկտուրային փոփոխություններից, անհրաժեշտություն առաջացավ հանքավայրի վերագնահատման, որն իրականացրել է «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ն: Հանքավայրի մանրագնին հետախուզական փուլը կատարել է «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի իրավահաջորդ «Վայք Ռեսուրս» ՍՊԸ-ն՝ 2007-2009թթ. ընթացքում:

Հանքաքարի հիմնական բաղադրիչ մասը հետևյալ միներալներ են՝ պիրիտ, սֆալերիտ, գալենիտ, խալկոպիրիտ: Բացհանքային դաշտը բաղկացած է երեք տեղամասից՝ մարվող պաշարների համապատասխան քանակություններով՝ 38017,7 տ, 27392,5տ և 16054,3 տ:



Նկար 1. Գլաձորի բազմամետաղային հանքավայրի տարածք

2009թ. հաստատված պաշարներն ըստ հանքաքարի կազմում են 14474,0 հազար տոննա (ըստ C<sub>1</sub> +C<sub>2</sub> կարգի), որտեղ ոսկու քանակությունը կազմում է 9789,1 կգ (0,68 գ/տ):

Հատկանշանական է այն փաստը, որ Գլաձորի բազմամետաղային օգտակար հանածոների հանքավայրի N5 անձնագրում որպես հանքավայրի արտադրական նշանակության պաշարներ դիտարկվում են ցինկը, կապարը և պղինձը, ուղեկցող միներալներից նշվում են սելենը, կադմիումը, արծաթը և տելուրը: Իսկ ոսկու քանակությունն առանձին փորձանմուշներում գնահատված է առավելագույնը 1գ/տոննա<sup>1</sup>:

<sup>1</sup> [https://www.geo-fund.am/files/mineral\\_potential\\_files/1/1496943654983.pdf](https://www.geo-fund.am/files/mineral_potential_files/1/1496943654983.pdf)

2016 թվականին «Վայք Մետալ» ՍՊԸ-ի կողմից հայտ է ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարություն Գլխավորի բազմամետաղային հանքի շահագործման համար: ՀՀ բնապահպանության նախարարությունը 15.12.2016թ. ԲՓ-105 բացասական փորձաքննական եզրակացությունն է տվել այդ հայտին: Ի թիվս այլ պատճառների, բացասական եզրակացության տրամադրումը հիմնավորված է եղել նաև տեղի բնակչության բացասական դիրքորոշմամբ: Մասնավորապես, նշվում է, որ 2016 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած հասարակական լուսմների ժամանակ ազդակիր համայնքի մասնակից 165 բնակիչից նախագծին դեմ է արտահայտվել 159-ը՝ որպես հիմնավորում ներկայացնելով համայնքում գյուղատնտեսության հողագործության, խաղողագործության, գինեգործության, անասնապահության զարգացման առաջնայնությունը: Նշվել է, որ հանքավայրի շահագործման հետևանքով համայնքը կկորցնի արոտավայրերը, կվնասվեն և կաղտոտվեն նշված տարածքից սկիզբ առնող ջրերի հոսքերը: Նման հիմնավորումներով դեմ է արտահայտվել նաև Վերնաշեն համայնքի ղեկավարը: Չի ընդունվել նույնիսկ «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի Գլխավոր համայնքի զարգացման համար տարեկան նախատեսված 10,0 մլն. դրամի փոխարեն 50,0 մլն. դրամի ներդրումներ կատարելու առաջարկը<sup>2</sup>: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 88-Ա հրամանով մերժվել է «Վայկ Մետալ» ՍՊԸ-ին Գլխավորի բազմամետաղային հանքավայրի շահագործման իրավունքի տրամադրումը: Ներկայումս «Վայք Մետալ» ընկերությունն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի չի տիրապետում<sup>3</sup>:

«Վայկ Մետալ» ՍՊԸ-ն 2017 թվականի մարտի 4-ին հայց է ներկայացրել ընդդեմ ՀՀ բնապահպանության, մի քանի օր անց նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունների՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ բնապահպանության նախարարության բացասական եզրակացությունը և անվավեր ճանաչել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Գլխավորի բազմամետաղային հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ստանալու վերաբերյալ մերժումը: Սակայն, այս դատական գործն օգուտ չտվեց Ընկերությանը, քանի որ պարզվեց, որ բնապահպանական փորձաքննական եզրակացությունը վարչական ակտ չէ, ապացույց է և այն չի կարող դատարանում վիճարկվել, իսկ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը դատարանի որոշումը կատարելու համար վարչական վարույթ հարուցեց և վարույթով մերժեց Ընկերությանն ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը:

---

<sup>2</sup> «Վայկ մետալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գլխավորի բազմամետաղային հանքավայրի բացահանքի շահագործման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվություն ԲՓ-105, 15.12. 2016թ.

<sup>3</sup> <https://www.geo-fund.am/hy/%D5%8F%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A4%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80>

«Վայկ Մետալ» ընկերությունը հայց ներկայացրեց ընդդեմ խոշորացած Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանի՝ դատարանից պահանջելով պարտավորեցնել նրան համայնքի հողերից հող հատկացնել «Վայկ Մետալ» ՍՊԸ-ին և կնքել հողօգտագործման պայմանագիր, որպեսզի Ընկերությունը, համաձայն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ կնքված պայմանագրի, կատարի ընդերքի ուսումնասիրություն Գլաձորի հանքի տարածքում: Ընկերության հայցը Վայքի դատարանը 16.05.2017թ. վճռով բավարարեց՝ պահանջելով չխոչընդոտել Ընկերության կողմից երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացմանը Գլաձոր համայնքի տարածքում Ընկերության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների ու բնական պաշարների նախարարության միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Վայոց ձորի մարզի Գլաձորի համայնքապետ Արմեն Մովսիսյանը բողոքարկել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստիճանի դատարանի այս որոշումը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան ուղարկված բողոքարկման մեջ Արմեն Մովսիսյանը նշում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստիճանի դատարանի որոշումն անհիմն է և անօրինական:

«Ըստ էության՝ Վայքի դատարանը պարտավորեցրել է Արմեն Մովսիսյանին ոչ իրավաչափ գործողություններ կատարել, քանի որ նա համայնքի հող հատկացնելու իրավունք չունի: Այդ վճիռը երեք աստիճանով էս բողոքարկել եմ, բայց մեր բողոքը չի բավարարվել և մտել է ուժի մեջ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված վճիռը կատարումը հնարավոր չէր առանց ՀՀ Սահմանադրության և ՀՀ մի շարք օրենքների խախտման, դիմել ենք այդ վճիռը կայացնող Դատարան /դատավոր՝ Հ.Դարբինյան/, որպեսզի վերջինս պարզաբանի, թե ինչպես այդ վճիռը պետք է կատարել առանց օրենքի խախտման: Սակայն, Դատարանը պատասխանել է, որ ամեն ինչ պարզ է և պարզաբանման կարիք չկա: Այդ որոշումը բողոքարկել ենք ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարան, որը պատասխանել է, որ իրավասու չէ վճիռը մեկնաբանելու և որ դա պետք է արվի վճիռ կայացնող դատարանի կողմից: Արմեն Մովսիսյանը, որպեսզի կատարի այդ անօրինական վճիռը, երկու անգամ դիմել է Գլաձորի ավագանուն, որն իրավասու է հողհատկացում անել և թույլ տալ համայնքի ղեկավարին հողօգտագործման պայմանագիր կնքել, սակայն, երկու անգամն էլ ավագանին մերժել է համայնքի ղեկավարի միջնորդությունները: Անհրաժեշտ է նշել, որ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ կնքված ընդերքի ուսումնասիրության պայմանագիրը, որի վրա Վայքի դատարանը հիմնվել է, ուժը կորցրել է: Անհասկանալի է՝ ինչի համար են ուզում այդ հողը ստանալ, եթե դրա համար չունեն ոչ թույլտվություն, ոչ էլ այդ հողի վրա գործունեություն ծավալելու իրավունք: Հիմա Արմեն Մովսիսյանը երկու քարի արանքում է. կա՛մ դատարանի վճիռը չկատարման համար պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, կա՛մ՝ պաշտոնական դիրքը չարաշահելու համար, եթե հողհատկացում անի, այսինքն՝ վճիռը կատարի», - այս մասին ԷկոԼուրին պարզաբանեց Գլաձոր համայնքի շահերի պաշտպան, փաստաբան Նազելի Վարդանյանը:

Դատարանի վճիռը կատարել հարկադրելու համար «Վայկ Մետալ»-ը դիմել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն: Հարկադիր կատարողը որոշել է Գլաձորի համայնքապետին պարտավորեցնել հողհատկացում իրականացնել: Սակայն Նազելի Վարդանյանը կարողացել է հասնել նրան, որ Վարչական դատարանն անվավեր է ճանաչել հարկադիր կատարողի որոշումը՝ Վայքի դատարանի վճռի կատարման անհնարինության պատճառով: «Վայք Մետալ»-ը այդ որոշումը ևս բողոքարկել է Վերաքննիչ վարչական դատարանում:

Այս դատական գործերից բացի «Վայկ Մետալ»-ը դիմել է Վայոց ձորի քննչական կոմիտե՝ պահանջելով քրեական գործ հարուցել Գլաձորի համայնքի ղեկավարի նկատմամբ, սակայն քննիչը մերժել է քրեական գործի հարուցումը հանցակազմի բացակայության պատճառով: «Վայկ Մետալը» ՍՊԸ-ն քննիչի որոշումը բողոքարկել է Արարատի և Վայոց ձորի առաջին ատյանի դատարան: Դատարանն անվավեր է ճանաչել քննիչի որոշումը և պարտավորեցրել քրեական գործ հարուցել:

Դատախազությունը բողոքարկել է այս դատարանի որոշումը ՀՀ քրեական վերաքննիչ դատարան, որպեսզի ուժի մեջ մնա Գլաձորի համայնքի ղեկավարի նկատմամբ քրեական գործի կարճման մասին Վայոց ձորի քննչական կոմիտեի քննիչի որոշումը: Այս դատական գործով խոշորացած Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանը հանդես է գալիս որպես երրորդ անձ: «Նիստի ընթացքում ներկայացրեցի բոլոր իրավական ու փաստական հանգամանքները, որոնք բացառում են Արմեն Մովսիսյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը», - ասաց Նազելի Վարդանյանը:

Նշենք, որ խոշորացած Գլաձոր համայնքը ոչ միայն դեմ է Գլաձորի հանքի շահագործմանը, այլև համայնքի ավագանին 2019թ-ի ապրիլի 29-ին ընդունել է «Գլաձոր համայնքի բնակիչների կողմից ներկայացված հանրագրում նշված առաջարկությանը հավանություն տալու մասին» թիվ 44 որոշումը<sup>4</sup>: Որպես որոշման հիմք է ընդունվել Գլաձոր համայնքի կազմի մեջ մտնող Գլաձոր, Վերնաշեն և Գետափ գյուղերի բնակիչների՝ համայնքի ղեկավարին և ավագանուն 2152 ստորագրությամբ հանրագրի ներկայացումը, որտեղ նրանք խնդրել և պահանջել էին արգելել և ապագայում բացառել Գլաձոր համայնքի վարչական տարածքում մետաղական հանքարդյունաբերության հետ կապված հետախուզական, առավել ևս հանքավայրերի շահագործման հետ կապված աշխատանքների իրականացումը: Իր հերթին Վայոց ձորի մարզպետարանը դիմել է ՀՀ Վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել «Գլաձոր համայնքը էկոտնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու վերաբերյալ» Գլաձորի ավագանու 29.04.2019թ. թիվ 44 որոշումը: ՀՀ վարչական դատարանը հետ է վերադարձրել Վայոց ձորի մարզպետարանի հայցադիմումը՝ նշելով, որ հայցադիմումը չի պարունակում որևէ հիմնավորում, դրան կից ներկայացված չէ որևէ ապացույց առ այն, որ պետության՝

<sup>4</sup> [http://www.gladzorhamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=affa6a77-eecca-4211-ab2d-c01b8c7607b9&fbclid=IwAR3mXLM9q7P4j30IXruNSbyhTbaCXvLRsfYk1VM\\_X5SDBYJYXosPPmEKkHk](http://www.gladzorhamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=affa6a77-eecca-4211-ab2d-c01b8c7607b9&fbclid=IwAR3mXLM9q7P4j30IXruNSbyhTbaCXvLRsfYk1VM_X5SDBYJYXosPPmEKkHk)

ընդերքի օգտագործման ոլորտում իրավունքների պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի վրա<sup>5</sup>:

ՀՀ վարչական դատարանը 2020 թվականի դեկտեմբերին կայացրել է «Թիվ ՎԴ/5916/05/19 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2020 թվականի ապրիլի 17-ի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության (Վայոց ձորի մարզի մարզպետարանի հայցն ընդեմ Գլաձորի համայնքապետարանի ավագանու): Այս որոշումը Գլաձորի համայնքապետարանի ներկայացուցչի կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարանում 2020 թվականի դեկտեմբերի 11-ին: Բողոքը հետ է վերադարձվել այնտեղ տեղ գտած թերությունները լրացնելու համար, ինչը կատարվել է և նյութերը 2020 թվականի դեկտեմբերի 17-ին նորից հանձնվել գրասենյակ: Կրկին անգամ այն վերադարձվել է, իսկ 03.03.2021թ. դրությամբ ներկայացված փաստաթղթերում տեղ գտած սխալներն ուղղելու համար սահմանված ժամկետը կրկին երկարաձգվել է<sup>6</sup>:

2020 թվականին «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ն մշակել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գլաձորի բազմամետաղային հանքավայրի 02.06.2009թ. դրությամբ հաստատված կոնդիցիաների պարամետրերի և պաշարների 2020-23թթ. վերագնահատման և վերահաշվարկման համար» ծրագիրը: Համաձայն այդ Ծրագրի՝ նախատեսվում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներով վերահաշվարկել ոսկու, արծաթի, կապարի, ցինկի պաշարները, ծարիրի և այլ ուղեկից բաղադրիչների պարունակությունների գնահատումը, հաշվետվության կազմումը և դրա ներկայացումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)՝ պետական ընդերքաբանական փորձաքննության անցկացման համար: Ըստ ծրագրի, քանի որ նախատեսվող աշխատանքները կատարվելու են գրասենյակային պայմաններում համակարգիչների միջոցով և դաշտի հետ որևէ կապ չեն ունենալու, ուստի տվյալ գործառույթների համար շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, ինչպես նաև թափոնների կառավարման պլան չի պահանջվում, ինչպես նախատեսված է Ընդերքի մասին օրենսգրքի 39-րդ հոդվածով:

ՏԿԵՆ-ը 26.02.2021 թվականին 3 տարի ժամկետով «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ին տվել է արդյունաբերական նպատակով երկրաբանական հետազոտության ԵՀԹ-29/309 թույլտվությունը և նրա հետ կնքել Պ-309 20.02.2021թ. պայմանագիրը: Գլաձոր համայնքի բնակիչները 2021թ-ի մայիսի 11-ին թույլ չտվեցին «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ին համայնքում Ծրագրի վերաբերյալ հանրային լսումներ անցկացնել:

## **Ազդակիր Գլաձոր համայնքի մասին**

ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի կազմում ընդգրկված են Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերը: Համայնքի տարածքում է գտնվում Պռոշյան իշխանների բերդի պարսպի մեծ մասը, խաչքարեր, «Սպիտակավոր»

<sup>5</sup> <https://www.ecolur.org/hy/news/mining/-/11825/>

<sup>6</sup> [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936110](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936110)

պատմամշակութային հուշարձանը, Սուրբ Հակոբ եկեղեցին, Թանահատի վանքը, որտեղ 13-րդ դարում գործել է Գլաձորի համալսարանը: Համայնքի վարչական տարածքը կազմում է 13133,54 հա: Բնակչության թիվը 2018թ. դրությամբ՝ 6215 հոգի, որից 52%-ը կանայք, տնային տնտեսությունների թիվը՝ 1221, ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը՝ 164, կենսաթոշակառուների թիվը՝ 865, ունեն 3 նախադպրոցական հաստատություն, 3 հանրակրթական դպրոց: Հողերի մակերեսը 13133,54 հա է, որից գյուղատնտեսական նշանակությանը՝ 12098,31 հա:



Նկար 2. Գլաձոր բնակավայր

Հիմնականում մշակում են խաղող, ծիրան, ընկույզ, խնձոր և զբաղվում են անասնապահությամբ և մեղվաբուծությամբ:

«Գլաձոր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրով<sup>7</sup> ներկայացված են 5 ծրագրերի անձնագրեր իրենց նախահաշիվներով: Համայնքի զարգացման ծրագրում որպես խնդիր նշվում են ներհամայնքային տրանսպորտի բացակայությունը, համայնքի բնակավայրերի կոյուղացումը, ճահճացված 32 հա տարածքի դրենաժի կառուցումը, խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգումը, աղբաամանների բացակայությունը, աշխատատեղերի բացակայությունը, համայնքային բյուջեի սղությունը:

Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգման նպատակով խնդիրը 2019 թվականին ներկայացվել է ՏԿԵՆ պետական բյուջեից կապիտալ սուբվենցիա ստանալու հայտ<sup>8</sup>:

## **2021 թվականի ապրիլի 9-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնք ԷկոԼուրի այցելության մասին**

Վայոց ձորի մարզի Գլաձորի համայնքապետ Արմեն Մովսիսյանը 2021 թվականի ապրիլի 9-ին ԷկոԼուրի հետ հանդիպման ժամանակ նշեց, որ չնայած նրան, որ ՀՀ ՏԿԵՆ-ը 2021 թվականի փետրվարին «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ին տվել է Գլաձորի հանքավայրի 3 տարով ուսումնասիրության լիցենզիա, համայնքի ավագանին համայնքի տարածքում գտնվող հանքավայրի շահագործման վերաբերյալ իր դիրքորոշումը չի փոխել և մնում է հավատարիմ իր՝ «Գլաձոր համայնքը Էկո-տնտեսական տարածք

<sup>7</sup> <http://vdzor.mtad.am/files/docs/24430.pdf>

<sup>8</sup> [http://vdzor.mtad.am/u\\_files/file/vdzor/Hamaynqner/gladzor\\_andznagir.pdf](http://vdzor.mtad.am/u_files/file/vdzor/Hamaynqner/gladzor_andznagir.pdf)

դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու վերաբերյալ» 29.04.2019թ. թիվ 44 որոշմանը: ԷկոԼուրի այն հարցին, թե Ընկերությունը հողհատկացման համար դիմել է համայնքին, նա տվեց բացասական պատասխան և նշեց, որ համայնքային հողերի կատեգորիաները չեն փոխվել: Ըստ նրա, իրոք, կան շատ դժվարություններ համայնքը Էկո-տնտեսական տարածք դարձնելու իրենց ծրագրերը կյանքի կոչելու հարցում, բայց այդ ուղով գնալը կապահովի համայնքի երկարաժամկետ զարգացման հեռանկարներ, ի տարբերություն կարճաժամկետ հանքարդյունահանման: Այդ ուղղությամբ կատարվում են որոշակի աշխատանքներ, մասնավորապես՝ համայնքային և մասնավոր հողատարածքների ոռոգումն ապահովելու համար մշակվել և պատրաստվել են Կորեկի-ձոր գետի վրա ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերը, և ներկայումս գործընթացներն ակտիվ փուլում են: Ջրամբարի շահագործմամբ Մալիշկայում, Վերնաշենում և Գլաձորում 800-900 հա հող ոռոգելի կդառնա: Ավելացրեց, որ Վերնաշեն բնակավայրի վարելահողերի մի մասը ոռոգման ջրի պակասի պատճառով ներկայումս չի մշակվում, ու եթե լուծվի ոռոգման ջրի հարցը, ապա հնարավոր կլինի իրացնել բնակավայրի պտղաբուծության և խաղողաբուծության մեծ պոտենցիալը: Նա նշեց, որ հողերի սեփանաշնորհման ժամանակ, ի տարբերություն այլ համայնքերի, Գլաձոր համայնքի բնակիչների մասնաբաժինը կազմել է շատ փոքր՝ 0,3-1,0 հա մակերես՝ այն էլ տարբեր որակի հողեր և որ այդպիսի հողերով գյուղացին ի վիճակի չէ հոգալու իր կարիքները, առավել ևս դրանց բազայի վրա զարգացնելու փոքր բիզնես: Հարցի լուծումը նա տեսնում է գյուղացիական կոոպերատիվների ձևավորման մեջ: Հողատարածքների սպասարկման հեշտացման նպատակով ձևավորվող գյուղացիական կոոպերացիաների ստեղծման աշխատանքները թեև դանդաղ, բայց առաջ են ընթանում: Այս հարցում ներդնողների կողմից հողի գնման առաջարկների դեպքերում ևս առաջանում են խնդիրներ, մասնավորապես, կապված մանր հողատերերի հողերի ապասեփանակչնորհման գործընթացների դժվարությունների և ժամանակատարության հետ: Ըստ Արմեն Մովսիսյանի՝ այդ գործընթացները դյուրացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի պետությունը գտնի մեխանիզմներ դրանք հաղթահարելու համար: Ըստ համայնքապետի, բացառությամբ հանքահարդյունաբերության, համայնքի զարգացման այլընտրանքային ծրագրերից են՝ գյուղատնտեսական, Էկոլոգիապես մաքուր կուլտուրաների մշակումն և հումքի վերամշակման փոքր պահածոների, չոր մրգերի, ուտելի կանաչեղենի արտադրամասերի հիմնումը, Էկոտուրիզմի զարգացումը, անասնապահության զարգացումը, խաղողագործությունը և դրա հումքի վերամշակումը, մեղվաբուծությունը: Համայնքապետն ընդգծեց նաև, որ նախկինում բանկերի կողմից տրամադրված գյուղատնտեսական վարկերի տնօրինման ոլորտում վարկառու բնակչությունը չի ունեցել բավարար գիտելիքներ, ինչի հետևանքով նրանք և նրանց համար երաշխավորություն տված բնակիչների հիմնական մասը ներկայումս հայտնվել են ֆինանսական ծանր վիճակում, չեն կարողացել մարել այդ պարտքերը, կուտակվել են սոկոսներ: Այդ խնդիրը հետագայում էլ ավելի չխորացնելու համար նա կարևորեց հետագա գյուղատնտեսական վարկերի ճիշտ և նպատակային օգտագործման համար նախնական գիտելիքների տրամադրումն և ուսուցման դասընթացների



կազմակերպումը: Նա նաև նշեց, որ «Գրանդ տոբակոյի» հետ պայմանավորվել են 5 հա-  
ի վրա ծխախոտ մշակելու վերաբերյալ, որը 5-7 կնոջ կապահովի աշխատանքով:

ԷկոԼուրի կողմից համայնքի 9 բնակչի հետ անցկացրած հարցազրույցի ժամանակ  
բոլորը դեմ արտահայտվեցին հանքավայրի շահագործմանը, քանի որ մտավախություն  
ունեն, որ հանքավայրի շահագործման հետևանքով համայնքը կկորցնի արոտավայրերը,  
կվնասվեն և կաղտոտվեն նշված տարածքից սկիզբ առնող ջրերի հոսքերը,  
տարածաշրջանում ձևավորվող ջրահոսքերը կաղտոտեն Արփա և Եղեգիս գետը, ինչպես  
նաև Հերիերի ջրամբարը:



*Նկար 3. Գլաձորի բնակիչներ*

Կարծում են, որ ծանր մետաղներով հողերի աղտոտումը կհանգեցնի ուռուցքային  
հիվանդությունների: Ըստ նրանց հողագործությունն ընդամենը բավարարում է իրենց  
ընտանեկան կարիքները և բիզնես չեն կարող կազմակերպել այդ հողակտորների վրա:  
Նույնը վերաբերում է նաև անասնապահությանը; Համայնքի տղամարդիկ հիմնականում  
մեկնում են արտերկիր՝ արտագնա աշխատանքի: Նրանք նշեցին, որ համայնքում  
բացակայում են աշխատատեղերը, ցածր են վարձու աշխատողների  
աշխատավարձերը, ունեն ոռոգման ջրի խնդիր, չնայած նրան, որ զբաղվում են  
խաղողագործությամբ, սակայն ունեն խաղողի իրացման դժվարություններ:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

1. Ներկայումս որևէ կազմակերպություն չունի Գլաձորի բազմամետաղային  
հանքավայրի շահագործման իրավունք:
2. Հանքավայրի ներկա պաշարները՝ ցինկի, կապարի և պղինձի համար, դիտարկված  
են որպես արտադրական նշանակության, որպես ուղեկցող միներալներ նշված են  
սելենը, կադմիումը, արծաթը և տելուրը: Իսկ ոսկու քանակությունն առանձին  
փորձանմուշներում գնահատված է մաքսիմալ 1գ/տոննա:
3. ՀՀ ՏԿԵՆ-ը 2021 թվականի փետրվարին «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ին 3 տարով տվել է  
Գլաձորի հանքավայրի արդյունաբերական նպատակով երկրաբանական  
հետազոտության ԵՀԹ-29/309 թույլտվությունը և նրա հետ կնքել Պ-309 20.02.2021թ.  
պայմանագիրը: Համաձայն այդ թույլտվության՝ 02.06.2009թ. դրությամբ

հաստատված հանքավայրի կոնդիցիաների պարամետրերը և պաշարները 2020-2023թթ. պետք է վերագնահատվեն և վերահաշվարկվեն:

4. «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ն 2021 թվականի ապրիլի 9-ի դրությամբ հողհատկացման համար դեռևս չի դիմել համայնքապետարան:
5. Գլաձոր համայնքի բնակչությունը դեմ է հանքավայրի շահագործմանը, հետախուզական աշխատանքների իրականացմանը, իսկ համայնքի ավագանին հավատարիմ է իր՝ 2019թ-ի ապրիլի 29-ին ընդունած «Գլաձոր համայնքը էկոտնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունը արգելելու վերաբերյալ» թիվ 44 որոշմանը: Հանրագրով Գլաձոր համայնքի կազմի մեջ մտնող Գլաձոր, Վերնաշեն և Գետափ գյուղերի 2152 բնակիչներ խնդրում և պահանջում են արգելել և ապագայում բացառել Գլաձոր համայնքի վարչական տարածքում մետաղական հանքարդյունաբերության հետ կապված հետախուզական, առավել ևս հանքավայրերի շահագործման հետ կապված աշխատանքների իրականացումը:

*Մույն հաշվետվությունը պատրաստվել է Ամերիկայի Ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*